

րայ¹ա, բարեխաւսութեամբ ասողի զբանդ. զի բազում անգամ հանգոյց զիս եւ ի հալածմանն կերակրիչ իմ եղել:

100² Իսկ ոմանց ³ի տանդ տեառն ես իբրեւ զանաւթ⁴ էի յաւելորդ: 101 Քանզի յաղագս որոյ արուեստի դու, տեր, զիս սպասաւորեալ մեծարեիր՝ այսմ ինչ դոքա չէին տենչողք. արծաթ եւ ոսկի, զոր թէ իմ ի շատ ումեքէ գտեալ էր, որում թէ ոք ի խնդիր էր՝ զայն ի պետս տեղւոյդ ծախէի: 102 Խոհակերութիւն ուսեալ իսկ չէի, եթէ ձկան աղիս ըստ ուրուք⁵ ճաշակելեացն մարթէի յաւրինել, եւ կամ զհաւուց փորոտիս, որովք թերեւս կարէի ումեք հաճոյ լինել:

103⁶ Բայց ես եւ այլ նոր իմն բանս ասեմ տեառնդ, զոր եթէ թուիցի⁷ արդարախնդիր մտացդ՝ նախ քան զամենայն աղաչեմ զտերդ՝ քննել զայդ. յորոյ ճշգրտիւ հասեալ ի վերայ՝ կամ զարմասջի՛ր եւ կամ խոտեալ իբրեւ զոչ արդար⁸՝ անգոսնեսջի՛ր⁹: 104 Քանզի յաւրէ, յորմէ հետէ տարար դու, տեր, զիս ի տեղիդ, մինչեւ յաւր հալածման իմոյ, ի մտից տեղւոյդ եւ կամ ¹⁰յերախայրեաց մինչեւ ցորամ մի յանձն իմ ոչ էր յարեալ, եւ յիրս իմոց պիտոյից ումեք ինչ ոչ էր տուեալ. եւ գիտեն զայս բնակեալքն ընդ իս, այլ առաւելագոյն այր մի Ակիթ անուն, որ եկեալ ի տեղիդ ի Գարդմանայ վանաց ի նմին աւուր, յորում հիմն արկաւ տեղւոյդ, եւ մինչեւ ցգնալն իմ ի տեղոջդ էր, եւ արդ լուայ, թէ առ Անդոյն Է. նա առաւել գիտէ, ¹¹քանզի յղելով նորա¹² արբանեկեալ էր զպետս տեղւոյդ. հարցցի, թէ կա՞յ ուրեք եւ ասասցի: 105 Այլ կարգեալքն ինձ ըստ տարւոյ ի տեառն Ներսէհէ եւ Յրահատայ¹³ ի պետս դարմանոյ եւ հանդերձոյ եւ ձիոյ՝ յայտնի Է, նոյնպէս եւ ի քո տեառն յերբաւորորդեացդ. եւ այն իսկ շատ լիներ ինձ եւ բաւական, այլ երբեք եւ յաւելորդացն ի

1 SS. Ուխիփորայ

ա Բ Տիմ. Ա 16

2 ԲԳտ. բաց են թողել այս հատուածը՝ «իսկ ոմանց ի տանդ տեառն... հաճոյ լինել» (Թուղթ, 102):

3 Ատ. ունի չակերտով. «Ի տանդ Տեառն ես իբրեւ անօթ էի յաւելորդ, քանզի յաղագս որոյ՝ արուեստի՝ դու Տեր, զիս սպասաւորեալ մեծարեիր»: Այսմ ի՞նչ դոքա չէին տենչողք... (Թուղթ, 100-101):

4 Ատ. իբրեւ անօթ

5 Ատ. ըստ որում

6 Վ. ուրիշ տեղ Է ղնում բայց ես եւ այլ նոր իմն... նա առաւել գիտէ (Թուղթ, 104) եւ զիս ընդ քեզ *թողիցէ որ աներկիւղութեամբ քաջ հովկի Է

7 Վ. թուեսցի

8 ՁՎԱտ. եւ կամ խոտորեալ իբրեւ զոչ արդար. այսպէս ըստ ուղղագրութեան ԲԳտ.

9 Ատ. անգոսնեսջիք

10 SS. երեխայրեաց... ոչ Է յարեալ. Ձ. երախայրեաց. Վ. յերեխայրեաց

11 Վ. ուրիշ տեղ Է ղնում հատուածս քանզի յղելով նորա արբանեկեալ էր... կամ զայլս լուսաւորիցեն (Թուղթ, 107):

12 Վ. քանզի յղելով նորա

13 Ատ. Յրատայ